

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

أزتك جريدة يومية سياسية وأدبية - الغد اليومية لإثارة ووعي

1500 Լ.Ո. 75ԲԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 2 (21051) ՀՈՐԵՔՇԱՐԹԻ, 6 ՄԱՐՏ 2002 10 ԷՋ

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՍՏ ՀԱՄԱՄԻՏՏ ԱՊՏԻՆԼԼԱ ԻՇԽԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԻՆ

Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ, որ Սէուտական Արաբիա կ'այցելէ, երէկ իր համանուն թագաւորութեան գահաժառանգ իշխան Ապտիլլայի առաջարկին, որ կ'առնչուի Միջին Արեւելքի տագնապին լուծման:

Սէուտցի պաշտօնատար մը ըսաւ, որ նախագահ Ասատ եւ գահաժառանգ իշխանը խորհրդակցութիւններ ունեցած են: «Անոնք դրական էին եւ կար կարծիքներու նոյնութիւն: քննարկուեցան բոլոր հարցերը», նշեց ան:

«Նախագահ Ասատ յայտնեց Դամասկոսի համաձայնութիւնը՝ Ապտիլլայ իշխանի առաջարկին, որ կ'առաջադրէ լուծել արաբեւիսրայէլեան տագնապը», յայտնեց պաշտօնատարը:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՐՑԱՔՆՆԵԼՈՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԻՍՏ

Սուրիոյ արաբները երէկ կայացուց կառավարութիւնը հարցաքննելու եւ անոր լուսարանական հարցումներ ուղղելու նիստ մը, որ առաջինն է վարչապետ Ռաֆիք Հարիրիի գլխաւորած կառավարութեան կազմութեանն ի վեր:

Երէկուան նիստին կառավարութիւնը հարցաքննուեցաւ երեք հարցերու մասին. առաջինն ու գլխաւորն էր երեսփոխան ճորձ Գասարճիի հարցաքննութիւնը, որ կը վերաբերէր բջիջային հեռաձայնի ընկերութիւններու վաճառած կարգ մը սպասարկութիւններուն, անոնց հետ պայմանագիրի շնչումին եւ անոնցմէ 600 միլիոն տոլար գանձելու կառավարութեան որոշումին:

Երկրորդ հարցաքննութեան նիստն էր Թրիփոլիի երեսփոխաններ Մոհամէտ Սաֆատիի, Մոհամէտ Քապարայի եւ Մորիս Ֆատէլի արժարժած Թրիփոլիի մէջ կարգ մը կառուցողական ծրագիրներու գործադրութեան «թեքնիք» չափանիշներուն չհամապատասխանելը:

Երրորդը ներկայացուցած էր երեսփոխան Ալի Նալիլ, Սուրի կառավարութեան գրանցումի փաստաթուղթերուն վրայ կարգ մը նշումներու առնչութեամբ:

Առաջին հերթին ըստ կարգի խօսք առնելով՝ երեսփոխան Պուրթու Հարպ բողոքեց, որ օրակարգի վրայ չեն դրուած իր ներկայացուցած հարցաքննութեան նիւթերը, որոնք կ'առնչուին Մապարիի Երպապայի կարգավիճակին, երկրագործութեան եւ Օգոստոս 2001ին կատարուած ձեռնարկութիւններու արշաւին:

Սուրիոյ արաբներն նախագահ Նեպիի Պրրիի ապա խօսք տուաւ երեսփոխան ճորձ Գասարճիի, որ քննադատեց հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Լուի Քրրուաիին, որ չէ սարգած երեսփոխանական յանձնարարումի յի սահմանարկները եւ խորհրդարանի վստահութիւնը, ուստի անհրաժեշտ է քաշել անոր նկատմամբ վստահութիւնը:

Քրրուաիի խօսք առնելով բացատրեց, որ նախկին կառավարութեան որոշած գանձումին շուրջ դատական հարց կայ եւ անհրաժեշտ է սպասել դատարանի վճիռին: Իսկ ինչ կը վե

Շար.ը՝ էջ 2

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ՇԷՅԻՆ ՊԱՀԺԱԹ ՂԷՅՍԻ

Լիբանանեան կուսակցութիւններու համախմբումին յառաջացուցած յանձնարարութեամբ, որուն պարտականութիւնն է հետապնդել պաղեստինեան ինթիֆատային պորակցութեան գծով համախմբումին որոշումներուն գործադրութիւնը, երէկ այցելեց տիրուպիներու համայնքապետ Չէյխ Պահժաթ Ղէյսին: Յանձնարարութիւն մաս կը կապուէր Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակութիւնը:

Յանձնարարութեամբ Չէյխ Ղէյսի ներկայացուց ինթիֆատային պորակցելու գծով տարուած աշխատանքները: Շէյխ Ղէյս, իր կարգին, իր պորակցութիւնը յայտնեց տարուող աշխատանքներուն եւ դատապարտեց Իսրայէլի գործադրած վայրագութիւնները:

ԿԱՍՊԻՑ ԾՈՎՈՒ ԻՐ ԲԱԺԻՆԻՆ ՍԷՋ

ԻՐԱՆ ՊԻՏԻ ԱՐԳԵԼԱԿԷ ԲԱՐԻՒՂԻ ՀԵՏԱԽՈՒՂՈՒԹԻՒՆԸ

ԹեՀՐԱՆ, 5 (ՌՈՅԹԸՐԶ).— Իրան Երեքարթի օր յայտարարած է, թէ ուրիշներու կողմէ քարիւղի որեւէ հետախուզութիւն պիտի արգելակէ՝ Կասպից ծովու ափ գոտիին մէջ, գոր իրը կը նկատէ, յայտնած է քարիւղի նախարար Պիժան Չանկանէ, ծովը եզերող պետութիւններու մէջ ժողովէն ետք, որուն ընթացքին կարելի չէ եղած համաձայնութիւն գոյացնել գաշն բաժնեկցելու շուրջ:

Չանկանէ ըսած է, թէ ԹեՀրան երկրաշարժներ յառաջացնելով ծովուն յատակը հետախուզութիւններու պիտի ձեռնարկէ իրանեան յառաջիկայ նոր տարուան ընթացքին, որ Մարտ 21ին կը սկսի:

Ազրպէյճան, Իրան, Ղազախստան, Ռուսիա եւ Թուրքմենիստան գրեթէ յառաջիկային չեն արձանագրած անցեալ շաբաթ Մոսկուայի մէջ կայացած խորհրդակցութիւնը մը ընթացքին, ինչ կը վերաբերի իրենց տարակարծութեանց լուծումին:

ԱՐԻՒՆԱԼԻ ԲԱՆՈՒՄՆԵՐ՝ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՍԷՋ



Տարեց պաղեստինցի մը կը փորձէ արգելք հանդիսանալ իսրայէլացի զինուորացիներու, որոնք արցունքաբեր ռումբեր կ'արձակեն անոնց պաղեստինցիներու վրայ:

Այն պահուն, երբ շրջանային ու միջազգային ուժեր գորակցութիւն կը յայտնեն սէուտական խաղաղութեան նախաձեռնութեան, պաղեստինեան շրջաններուն ու Իսրայէլի մէջ արիւնայի բախումներն ու փոխադարձ յարձակումները կը շարունակուին՝ բարձրագոյնով գոհերուն ու վերաւորներուն թիւը:

Պաղեստինցի զինեալ մը Երկուշաբթիէն Երեքշաբթի լուսցող գիշերուան ընթացքին կրակ բացաւ Թէյ Աւիւի ճաշարաններէն մէկուն վրայ՝ երեք գոհ եւ 25 վերաւոր պատճառելով: Ականատեսներ յայտնեցին, որ պաղեստինցի զինուած էր գնդակահարելով մը եւ ձեռնառումներով: Ներկաներէն մէկը անմիջապէս

կրակ բացած ու սպաննած է զինեալը:

Պաղեստինցիներ երկու այլ իսրայէլացիներ սպաննեցին անձնասպանական գործողութեան մը եւ այլ յարձակումի մը ընթացքին: Անձնասպանական գործողութիւնը կատարուեցաւ հրահրայի Իսրայէլի Աֆուլա քաղաքին օրովիսի մէջ կայանին մէջ: Պաղեստինցիներ կը գտնուէր Նազարէթէն Թէյ Աւիւ ուղղուող օթոպիւսին մէջ, որ կանգ առած էր Աֆուլայի մէջ: Զինեալը ամբողջ մարմինը օդակած էր ռումբերով: Պաղեստինցիներ կողքին, սպաննուեցաւ ճամբորդ մը եւ հինգ ուրիշներ վիրահարուեցան: Գործողութեան պատասխանատուութիւնը ստանձնեց

Իսրայէլեան ժիհատ շարժումը: Իսկ Երուսաղէմի մօտ, պաղեստինցի մը սպաննեց հրեայ մը, որ ինքնաշարժով կ'անցնէր: Մօտակայ արաբական գիւղի մը մէջ զպրոցին մօտ այլ պայթեցաւ ական մը՝ քանի մը վիրահար պատճառելով: Պաղեստինեան աղբիւրներ հաւանական նկատեցին, որ բնակեցման վայրերէն հրեաներ զետեղած ըլլան ռումբը:

Իսրայէլեան ուժերը անպատասխան չձգեցին պաղեստինեան յարձակումները: Երուսաղէմի հարաւը գտնուող քաղաքի մը մէջ անոնք սպաննեցին պաղեստինցի մը, ինչպէս նաեւ՝ շորս հրթիռներ արձակեցին

Շար.ը՝ էջ 10

ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ԱՆԳԱՐԱ ԺԱՄԱՆԱԿ ԿՐ ԿՈՐՄՆՑՆԷ

Կ'ԸՍԷ ՃԵՄ

Թուրքիոյ արաբին գործոց նախարար Իսմայիլ Ճէմ Երկուշաբթի օր յայտնած է, թէ Թուրքիա ժամանակ կը կորսցնէ Երուսաղէմի Միութեան անդամակցելու իր քայլերուն գծով, եւ թէ Ե. Միութեան բարեկարգումներուն առնչութեամբ քաղաքական պայքարը կը վնասէ երկրին անդամակցութեան հաւանականութեանը:

Ե. Միութեան անդամակցութեան թեկնածու Թուրքիա կ'ըսէ, թէ կ'ուզէ անդամակցութեան համար բանակցութեանց սկսիլ այս տարի, մինչ անոր խորհրդարանը քայլերու կը դիմէ վաւերացնելու համար ազգային ծրագիր մը, ըստ որում, մարդկային իրաւանց, արդարութեան դրութեան եւ տագնապալի տնտեսութեան մարզերուն մէջ իսկական բարելաւումներ պէտք է արձանագրուին:

Սակայն յաճախ «նորք» բարեկարգումները Թուրքիոյ կառավարական ընկերակցութեան միասնականութեան կը վնասեն:

«Ե. Միութեան հարցին կը մօտեցնալ կարելի ամենն վատ ձեւով եւ կը կարծեն, թէ ժամանակ կը կորսնցնենք», ըսած է Ճէմ հարցազրոյցի մը ընթացքին:

«Կը պայքարինք Ե. Միութեան վերաբերեալ հարցերու գծով, կը բաժնրկինք ընդդիմադիր կողմերու: Ասկիւ մեզ որեւէ տեղ պիտի չհասցնէ», շեշտեց ան:

Շար.ը՝ էջ 3

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ ԿԱՐԵՒՈՐ ՀԱՄԱՐԵՑ ԵԱՀԿԻ ՀԵՏ ԵՐԵՒԱՆԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայաստանի նախագահ Ռուպերթ Քոչարեան երէկ ընդունեց ԵԱՀԿի նախագահ, Փորթուգալի արտաքին գործոց նախարար Խայմէ Կամալի գլխաւորած պատուիրակութիւնը:

Նախագահ Քոչարեան հանդիպումին ընթացքին դրական գնահատեց ԵԱՀԿի հետ Հայաստանի յարաբերութիւնները: «Եւրոպական ուղղութիւնը առաջնահերթ է Հայաստանի համար եւ մենք կը ձգտինք կառուցելու ժողովրդավարական արժեքներու եւ պատշաճ շուկայական յարաբերութիւններու վրայ հիմնուած պետութիւն», նշեց նախագահ Քոչարեան, աւելցնելով, որ այդ ճանապարհին վրայ Հայաստան կ'ակնկալէ եւրոպական կառուցելու աջակցութիւնը եւ պատրաստ է լայն համագործակցութեան:

Կողմերը նաեւ քննարկեցին շրջանային հարցեր, դրացի պետութիւններու հետ Հայաստանի յարաբերութիւնները, եւ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ներկայ հանգրուանը:

Խայմէ Կամալ յայտնեց, որ Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծումը կը շարունակէ մնալ ԵԱՀԿի գործունէութեան կարեւորագոյն ուղղութիւններէն մէկը:

Իր կարգին, վերահաստատելով տագնապին խաղաղ լուծման գծով Հայաստանի վճռակալութիւնն ու հետեւողականութիւնը, նախագահ Քոչարեան ըսաւ. «Մենք լաւ կը գիտակցինք տագնապին լուծման կարեւորութեան, թէ մեր երկրի եւ թէ ողջ շրջանին համար»: Տագնապին վերջնական լուծման համար նախագահ Քոչարեան անհրաժեշտ նկատեց կողմերուն մօտ

Շար.ը՝ էջ 10

ՔՈՉԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ



Նախագահ Քոչարեան կ'ընդունի Իրանի պաշտպանութեան նախարարը:

Հայաստանի նախագահ Ռուպերթ Քոչարեան երէկ ընդունեց պաշտօնական այցելութեամբ մը Հայաստան գտնուող Իրանի պաշտպանութեան նախարար Ալի Շամխանին եւ անոր գլխաւորած պատուիրակութիւնը:

Շամխանի նախագահին փոխանցեց Իրանի նախագահ Մոհամէտ իթաթմիի ողջոյնները:

Քոչարեան եւ Շամխանի անդրադարձան անցեալ տարի նախագահ Քոչարեանի Իրան կատարած պաշտօնական այցելութեան ընթացքին ձեռք բերուած համաձայնութիւններու իրագործման ընթացքին, եւ նշեցին, որ անոնց իրականացումը կը նպաստէ փոխազնուելու գործակցութեան ընդլայնման: Անոնք նաեւ ընդգծեցին, որ Հայաստանի եւ Իրանի բարեկամական յարաբերութիւնները կը բխին երկու պետութիւններու շահերէն, շրջանի քաղաքական եւ տնտեսական իրավիճակէն, եւ ուղղուած են շրջանային կայունութեան ամրապնդման:

Հանդիպումին ընթացքին, որուն մասնակցեցաւ նաեւ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան, քննարկուեցան շրջանի ռազմաքաղաքական դրութեան եւ պահպանութեան առնչուող հարցերը:

Շամխանիի գլխաւորած պատուիրակութիւնը նաեւ հանդիպում ունեցաւ Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի հետ:

Հանդիպումին ընթացքին կողմերը ընդգծեցին շրջանի երկրներու միջեւ համագործակցութեան ընդարձակման անհրաժեշտութիւնը, յատկապէս նոր տագնապներու կանխարգիլման առումով: Մարգարեան եւ Շամխանի նաեւ անդրադարձան Հայ-իրանական յարաբերութիւններու ընդլայնման հեռանկար

Շար.ը՝ էջ 10

ՆԱԽԱԳԱՇ ԼԱՀՈՒՏԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երեկ ստացավ Սոմալիի նախագահ Ապտի Բաւեմ Սալատ Հասանի նամակ մը, զոր յանձնեց Լիբանանի մէջ Սոմալիի պատուոյ հիւպատոս, նախկին երեսփոխան Ատնան Թրապուլի:



Նախագահ Լահուտ կ'ընդունի Գաբարար Արիտին:

Կ'ընծայէ իշեալ ժողովին: Նախագահ Լահուտ երեկ ընդունեց տեղեւ Ան նաեւ հաստատեց, որ այս հանգրուանին արար պզգին եւ անոր պզգային շահերուն կը սպտանան բազմաթիւ վտանգներ, զորս անհրաժեշտ է միասնաբար դիմագրաւել, եւ ասոր համար է, որ մեծ կարեւորութիւն ընդունուին:

ԿԱՌՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՐՑԱՔՆՆԵԼՈՒ...

Շարունակուած Ա. Էջէն

րաբերի պայմանագիրի շնչումն, ապա կառավարութիւնը պայն կատարած է պայմանագրի 22րդ յօդուածի Ե. պարբերութեան հիմամբ, որ կառավարութեան կը շնորհէ կամայականօրէն նման քայլ առնելու իրաւունքը: «Ընկերութիւններուն վճարելի արդար հատուցումը սահմանադրական պարտաւորութիւն է, եւ անոր գումարը ճշդելու ուսումնասիրութիւն կ'ընէ միջազգային հաշվեքննիչ ընկերութիւն մը», ըսաւ ան:

Երեսփոխաններ քուէարկութեամբ վերահաստատեցին Քըրտահիի նկատմամբ իրենց վստահութիւնը: Այնուհետեւ նիւտին ներկայացուցաւ հիւսիսի երեսփոխաններու արծարծած հարցաքննութեան նիւթը, եւ անոնց անունով խօսք տաւ երեսփոխան Մոհամէտ Քապարա, որ հաստատեց, թէ կառավարութիւնը ստուգումներ չէ կատարած թէ շինարարութեան եւ բարգաւաճման խորհուրդի հիւսիսի մէջ գործադրուած ծրագիրները որքանով կը համապատասխանեն «թեքնիք» չափանիշներուն:

վստահութեան հարց չեն դնել, որովհետեւ իրենց նպատակն է բարելաւել տալ Վ. եւ Բ. խորհուրդի գործունէութիւնը, որովհետեւ անոր ծրագիրները միեւնոյն հարցեր կը պատճառեն բոլոր շրջաններուն մէջ. հետեւաբար անոնց զօնով քննիչ յանձնախումբ պէտք է կազմել եւ թափ տալ խորհուրդի երկրաչափական մարմինի ստուգումներուն:

Վարչապետ Հարի րի անգամ մը եւս խօսք տուաւ իշեցուցուց, որ վերաշինութեան եւ բարգաւաճման խորհուրդը վերջին երեք տարիներուն բազմաթիւ ծրագիրներ ապրեցաւ. նախ որոշուեցաւ լուծել պայն եւ միացնել այլ մարմինի, ապա բարեփոխուեցաւ այդ օրէնքը: Այս իրադարձութիւնները անդամալուծեցին խորհուրդը, որ հակառակ այս վիճակին կրցաւ իրագործել բազմաթիւ ծրագիրներ, իսկ հիմա անիկա ունի նոր վարչութիւն, որուն առիթ պէտք է տալ:

Երեսփոխան Ալի Խալիլ ըսաւ, որ իր հարցաքննութեան պատճառն է հնութիւններու վարչութեան որոշումով Սուրի մէջ բազմաթիւ կայունացումներու ստեղծումը: Մշակուածի նախարար Ղասսան Սալամէ բացատրեց, որ այդ վայրերուն մէջ հնագիտական արժէքներ կրնան յայտնաբերուիլ եւ ֆինանսատրուովը ապահովելու ետք պիտի սկսի ստուգումի աշխատանքը, իսկ կայունացումներու մեծ մասը այս նպատակով ստեղծումի ծիրէն դուրս բերելու աշխատանք կը տարուի:

Սորիդարանի նախագահ Պըրրի խօսք տուաւ իր անդունելի համարեց այս կացութիւնը, դիտել տալով, որ ինքրոյ առարկայ կայունացումներու սեփականատէրերը ոչ մէկ ձեւով կրնան օգտագործել վանդը, եւ անիկա վնաս կը հասցնէ իրենց շահերուն: Պըրրի կէսօրէ ետք ժամը երկուսին փակեց նիւտը:

«ԱԶԳԱԿ»Ի ԵՒ «ՌԱՍԻՈ ՎԱՍԻԿԱՆ»Ի ՄԻՋԵՒ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆ

«Ազգակ»ի եւ «Ռասիօ Վասիկան»ի միջեւ, երեկ կայացաւ յարապակի համաձայնութիւն, ըստ որուն ամէնօրեայ հեռարկանութեամբ եւ էլեկտրոնային մէջի դրութեամբ «Ազգակ»ը լրագրութիւն տպարկէ «Ռասիօ Վասիկան»ին: «Ազգակ»ի փոխանցած լուրերը տպարկուած «Ռասիօ Վասիկան»ի հայկական բաժանմունքին կողմէ առօրեայ լրագրութեան համար:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Բանակի հրամանատարութիւնը յայտարարեց, որ իսրայէլեան պատերազմական օդանաւեր երեկ կէսօրէ առաջ ժամը 11ին Լիբանանի օդային սահմանները բռնաբարելով թռիչքներ կատարեցին հարաւի վերեւ, եւ բանակային ուժեր Նապաթիէէն հակօդային պէնքերէ կրակ բացին անոնց վրայ:

Հարաւի դիմադրութիւնը, իր կարգին, հարգարգրութեամբ մը յայտարարեց, որ իր ուժերը երեկ կէսօրէ առաջ նոյնպէս հակօդային պէնքերէ կրակ բացած են Նաբուրայի եւ հարաւի արեւմտեան հատուածին վերեւ թռիչք կատարած իսրայէլեան օդանաւերուն վրայ:

Երեկ կէսօրէ ետք իսրայէլեան օդանաւերը թռիչքներ կատարեցին Մապարէի Շրպայի եւ Արբուպի վերեւ:

Միւս կողմէ, Մապարէի Շրպայի մէջ գտնուող իսրայէլեան ուժերու Ռամթայի դիրքէն ծանր գնդացիներու կրակ բացուեցաւ Պասթրա շրջանին վրայ:

ՂԱՃԱՐԻ ՊԱՐՊՈՒՄ

Ազգային Լրատու գործակալութիւնը երեկ հաղորդեց, որ շրջան կ'ընեն տարածայնութիւններ, թէ իսրայէլեան ուժերը քանի մը շաբաթէն պիտի հեռանան սահմանային Ղաժար գիւղի լիբանանեան եւ սուրիական հատուածներէն:

Նոյն աղբիւրը նաեւ հաղորդեց, որ իսրայէլացիք սկսած են գիւղը հիսուսային Իսրայէլէն բաժնող նոր փշաթելէ ցանկապատի կառուցման աշխատանքին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենակը ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն կէսօրէ ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահական (ուղղարար եւ պետական հիւանդանոցային բուժում):
- 2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տաման):
- 3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի պահովում:
- 4) Գաղթականներու նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 5) Բնակարանային հարցերու նախարարութեան (հսդէ) դիմումներ:
- 6) Աշխատանքի նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 7) Զաղաքապետութիւններու հետ կապուած հարցեր:
- 8) Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան (ԱճՏ Էլ ԱճՏ) հետ կապուած հարցեր:

Դիմողները պէտք է ներկայանան «Շաղոյեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենակ եւ կամ նախքան ներկայանալը հեռաձայնել 01-259881 եւ 01-242582 թիւերուն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԳՐԱՍԵՆԱԿ

ՄԱՀԱԶԴ

Տիրար Կարօ Սվաճեան եւ զաւակները
Սաօ, Ալիս եւ Նարինէ

Տէր եւ տիկին Վարուժ Սէրայտարեան եւ զաւակները
Տէր եւ տիկին Գօգօ Թահմիզեան
Տէր եւ տիկին Ճորճիկ Գազանճեան եւ զաւակները
Տէր եւ տիկին Մովսէս Չափարեան եւ զաւակները
Տէր եւ տիկին Վարուժ Չափարեան

Օրդ. Նաթալի Չափարեան
եւ համայն ազգականները կը գոժեն իրենց կնոջ, մօր, քրոջ եւ հարազատին՝

ՄԱՐՈ ՍՎԱՃԵԱՆԻ (Ծնեալ՝ ՉԱՓԱՐԵԱՆ, 1960ԻՆ)

Մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 5 Մարտ 2002ին, առաւօտեան ժամը 10:00ին «Ժեզթառի» հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Զորեքշաբթի, 6 Մարտ 2002ին Ֆարի մատարան մէջ, կէսօրէ առաջ ժամը 11ին, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Այնճարի գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապը:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին ծնողքին բնակարանը, Ֆանար, Չորեքշաբթի 6, Հինգշաբթի 7 եւ Ուրբաթ 8 Մարտին:

ԲԱԽՏԱՒՈՐՈՒԾ

Տէր եւ տիկին Գօգօ եւ Միւրէյ Խալոյեան բախտաւորուած են երկրորդ մանչ կաւակով մը՝

ԿԱՐԵՆ

4 Մարտ 2002

ԿԱՐԻՆԵ ՉՈՒԼՃԵԱՆ

Ընդ ԵՂԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ Նշանուած

2 Մարտ 2002

ԿՈՒՉՈՒԻՆ

●Վարպետ եւ փորձառու աղանգաշարներ:
Հեռ. 03-862901:

STUDIO
Lantern

●Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ
Հեռ. 01-268866
եւ 03-695399

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԿԸ ԳՐՈՒԱՏԵ ՆԱԽԱԳԱՀ ԱՍՍՏԻ ԼԻԲԱՆԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երեկ դրուատեց Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի Լիբանան այցելութիւնը եւ բարձր գնահատեց անոր արդիւնքները, որոնց դրական գիծերուն շուրջ համաձայն են բոլոր լիբանանցիները:

Յովնանեան հաստատեց, որ այս արդիւնքները կ'ամրապնդեն լիբանանեւսուրիական յարաբերութիւնները՝ զանոնք հաստատելով հասարակաց շահերու եւ միեւնոյն ակառօցիքը բաժնելու սկզբունքային հիմքերու վրայ: Ան կոչ ուղղեց, որ արաբական երկիրները հետեւին այս օրինակին եւ Պէյրութի մէջ գումարուելիք իրենց վեհաժողովին նուիրագործեն ճակատագրական հարցերուն առնչութեամբ իրենց միակամութիւնն ու միասնական կեցուածքը:

«Նախագահ Ասատի պատմական այցելութեանն էտք բարեկեցած լիբանանեւսուրիական միացեալ կեցուածքը մեկնակետը պէտք է ըլլայ արաբական արեւելումին», ըսաւ նախարար Յովնանեան, կոչ ուղղելով արաբներուն, որ պարզապէս կանգնին լիբանանեւսուրիական այս կեցուածքին, որուն շնորհիւ պատասարուցան հարան ու արեւմտեան Պեքասն եւ գոտայնդուցան Իսրայէլի դիմադրող բոլոր ուժերը, ինչպէս ցոյց կու տան Պաղեստինի դէպքերը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԳՐԱՍԵՆԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենակը կը յայտնէ, թէ Ընդհանուր Ապահովութեան Ուժերու ընդհանուր տնօրէնութիւնը յայտարարեց, որ կարիքը ունի պիտուորագրելու իրաւաբանութեան վկայական (շխանա) ունեցող այրեր, որոնք քննութիւն-մրցանքով յաջողելու պարագային՝ պիտի ընդունուին սպայի աստիճանով:

Թեկնածուն պէտք է լիբանանցի ըլլայ արեւելի քան տասը տարիէ ի վեր, պէտք է ըլլայ ամուրի, այրի, կամ ամուսնալուծուած, եւ պատկառելի չէ ունենայ: Ան պէտք է ունենայ լիբանանեան Բ. պարաօրէնա կամ անոր համապատասխանող վկայական, ինչպէս նաեւ իրաւաբանութեան լիբանանեան վկայական (շխանա), իսկ համապարանական ուսման տարիներու միջիւր պէտք է ունենայ 12/20 եւ վեր:

Թեկնածուն պէտք է կատարած ըլլայ պիտուորական ծառայութիւնը, կամ կատարելու ընթացքի մէջ ըլլայ, եւ կամ մէկ կատարելու համար անկէ վեր լացուցուած ըլլայ: Առաւելագոյն տարիքը քաղաքայիններուն համար 24ն է, իսկ պիտուորականներուն՝ 26:

Թեկնածուն պէտք է վայելէ քաղաքացիի բոլոր իրաւունքները եւ մէկ ամիսէ աւելի բնակարանային վճիռ ստացած պէտք չէ ըլլայ:

Գիմումները կ'ընդունուին 11/3/2002էն մինչեւ 4/4/2002, Ընդհանուր Ապահովութեան Ուժերու ընդհանուր տնօրէնութեան կեդրոնատեղիին մէջ, Արդարութեան պալատին դիմաց: Մինչ այդ, յաւելեալ մանրամասնութիւններ կարելի է ստանալ այդ ուժերու շրջանային կեդրոնատեղիներէն, ինչպէս նաեւ Հայկական Երեսփոխանական Գրասենակէն, «Շաղոյեան» կեդրոն, Բ. յարկ:

ԿՈՒՉՈՒԻ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Վաճառող շրջուն մերկայացուցիչ մը (salesman), ինքնաշարժ ունենալով պայման, ամսական եւ շահաբաժին:
- Տեղ եւ տիկին Նազարեթ եւ Ռիթա Պատարճեան՝ ընդ 100 տողով՝ ԲԱՄԻՄԱՆ, ամսական եւ շահաբաժին:

Դիմել՝ հեռ. 03-349300:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Վարդուհի Պատիկեան
Արթ. Տ. Յակոբ քհն. Պատիկեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին Սահակ Պատիկեան եւ զաւակները
Տէր եւ տիկին Վահէ Պատիկեան
Տէր եւ տիկին Յովսէփ եւ Սիրվարդ Պոյաճեան եւ զաւակները

Տիկին Անահիտ Մալեան եւ զաւակները
Տէր եւ տիկին Վրէժ եւ Անժէլ Քէնտրեան
Տէր եւ տիկին Ժորժ Պատիկեան եւ զաւակները
Տէր եւ տիկին Երջանիկ Թարգմանեան եւ զաւակները
Տիկին Ժորժէթ Երջանիկեան եւ զաւակները
Տիկին Գաթրիկ Պարմաբազեան եւ զաւակները
եւ համայն ազգականները կը գոժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, հօրեղբոր, քեռիին, քեռայրին եւ հարազատին՝

ԱՐԱՇԱՄ ՊՉՏԻԿԵԱՆԻ (Ծնեալ՝ ԵՊԱՆԿԻՅԷ, 1928ԻՆ)

Մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 5 Մարտ 2002ին, առաւօտեան ժամը 5:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Զորեքշաբթի, 6 Մարտ 2002ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցու մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապը:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը Թրատ Թաղ, Չորեքշաբթի 6, Հինգշաբթի 7 եւ Ուրբաթ 8 Մարտին:

